Digitally signed by HAYRAPETYAN HRACHUHI 5607810178
Date: 2023.04.07 12:17:41 MSK

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Թեմատիկ պլանավորում

7-րդ դասարան,

2-րդ կիսամյակ, շաբաթական 1 ժամ

Դաս	Էջ	Պատկերում բնօրինակից	ժամ
Նպատակը		• Պատկերվող օբյեկտների ձևի, գծային և գունային հեռանկարչության, լուսաստվերի, կոմպոզիցիայի պարզագույն տեսական հիմունքների ուսումնասիրում: • Առաջադրանքների գծային կառուցվածքի, ձևի, ծավալի, հեռանկարի, լուսաստվերների, լուսաօդային միջավայրի ինքնուրույն վերլուծման և պատկերման կարողության զարգացում: Ստվերագծումով (ձևի ուղղությամբ) պատկերվող օբյեկտների ծավալների հաղորդման կարողության կատարելագործում, • Թղթի կամ ստվարաթղթի վրա ներկերի, գույնի, գունավոր գծերի, բծերի, հուզական զգացումների, տրամադրություններ ստեղծելու հմտությունների ձևավորում: • Ինքնուրույն աշխատանքի կատարման խթանում: • Դիտման և ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված հնարքների գիտելիքների կիրառման ձևավորում: • Բնական մոտիվների հիման վրա գունային և երանգային հարաբերությունների հաղորդումը նատյուրմորտի, բնանկարի կոմպոզիցիաներում: • Ստեղծագործական գործունեության գեղարվեստական կարողությունների և հմտությունների կատարելագործում:	
Վերջնարդյունքները		• Պատկերի օբյեկտի ձևի, գծային և գունային հեռանկարի, լուսաստվերի, կոմպոզիցիայի պարզագույն տարրերը: • Պատկերի կառուցվածքը, ձևը, ծավալի հեռանկարչական կրճատումները, լուսաստվերը: • Վերլուծի և վերարտադրի լուսաօդային միջավայրը: • Աշխատի ինքնուրույն և միտքն արտահայտի հետաքրքիր ձևակերպմամբ: • Անվանի աշխատանքները, քննարկի և մեկնաբանի աշխատանքի ընթացքը:	
2		Բնանկարի էտյուդ (պլեներ)	1

3		Նատյուրմորտ (սև թղթի վրա սպիտակ ներկով)	1
13		3-5 առարկաներից կազմված նատյուրմորտի պատկերում	1
16		Բնապատկերներ	1
18		Դիմանկար	1
Դաս	**Էջ**	**Թեմատիկ աշխատանք**	**ժամ**
Նպատակը		• Ներկայացնել բնանկարի ժանրը հայկական կերպարվեստում: • Զարգացնել պատկերավոր մտածողությունը, երևակայությունը: • Զարգացնել վերարտադրող և ստեղծագործական երևակայությունը: • Հաղորդել գիտելիք գծային և գունային հեռանկարչության կանոնների մասին: • Ամրապնդել գիտելիքները լեռների շղթայական դասավոր-վածության, ծեր և երիտասարդ լինելու, լեռների կառուցվածքի մասին (ստորոտ, լանջ, գագաթ): • Ապահովել բնագիտություն և կերպարվեստ միջառարկայական կապ: • Զարգացնել սերը հայրենիքի նկատմամբ: • Հաղորդել գիտելիք գծային և գունային հեռանկարչության կանոնների մասին: • Ձևավորել դիտման և ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքները արդյունավետ կիրառելու հմտություններ: • Ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողություններ և հմտու-թյուններ: • Գունային գամմայի ճիշտ օգտագործում: • Հեռանկարի խնդիրների լուծում:	
Վերջնար-դյունքները		• Ստեղծի հորինվածքներ, որտեղ արտացոլվում են սովորական մար-դու և հեքիաթների, հերոսների բնորոշ գծերը. համամասնությունների չափազանցում, արտասովոր շարժում և այլն: • Ստեղծել ծավալային կոմպոզիցիա: • Ստեղծի հետաքրքիր կոմպոզիցիա, • Միտքն արտահայտի հետաքրքիր, • Ճիշտ կառուցի հեռանկարը • Անվանի աշխատանքները	

		• Քննարկի և մեկնաբանի աշխատանքի ընթացքը։Պատկերի և գունավորի պարզ պատկերներ, ձևեր և առարկաներ։ • Պատկերի բնանկար։ • Ապահովի գծային և գունային հեռանկարի կանոնները։	
5		«Իմ ժողովրդի հաղթանակները»	1
6		«Հին ամրոց»	1
8		«Առավոտը գյուղում»	1
12		«Հայկական ավանդական տան պատկերում»	1
18		Գրական ստեղծագործություն պատկերազարդում	1
Դաս	**Էջ**	**Դեկորատիվ աշխատանք**	**Ժամ**
Նպատակը		• Ինքնուրույն աշխատանքի կատարման խթանում։ • Կիրառական արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրում, կրկնօրինակում։ • Գիտելիքների ընդհանրացում և համակարգում։ • Փոխադարձ համագործակցում ուսումնական մյուս առարկաների հետ։ • Դիտման և ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքների կիրառման ձևավորում։Ներկայացնել զարդա-նկարային հորինվածքի առանձնահատկությունները։ • Ծանոթացնել դեկորատիվ- կիրառական արվեստին։ • Ձևավորել շինությունների մակետներ կառուցելու հմտու-թյուններ (խորանարդներ, բուրգեր, գլաններ, կոներ...) • Ստեղծել պայմաններ կառուցված իրերով խաղեր հորինելու համար։	

Վերջնարդյունք-ները		• Աշխատի ինքնուրույն: • Միտքն արտահայտի հետաքրքիր: • Կարողանա ստեղծագործել այլ նյութերով: • Ճանաչի ստեղծագործությունները: • Կարողանա համագործակցել ընկերների հետ: • Անվանի աշխատանքները, քննարկի և մեկնաբանի աշխատանքի ընթացքը: • Կառուցի զարդանկարային հորինվածք • Կառուցի շինությունների մակետներ (խորանարդներ, բուրգեր, գլաններ, կոներ...) • Կառուցված իրերով հորինի խաղեր:	
9		Ծանոթություն հայկական տարազի առանձնահատ-կությունների և ավանդույթների հետ: Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր շրջանների տարազների օրինակների արտանկարում:	1
10		Ազգային տարազով տիկնիկների էսքիզ	1
14		Հայկական կերպարվեստին նվիրված գրքի (ալբոմի) կազմի նախանկար	1
15		Դիզայներական էսքիզ՝ մանկական խաղահրապարակ	1
19		Գովազդ	1
Դաս	**Էջ**	**Արվեստի պատմություն**	**ժամ**
Նպատակը		• Ստեղծագործությունները՝ ըստ ոճական առանձնահատկու-թյունների և ուղղությունների ուսումնասիրելու հմտությունների ձևավորում: • Ստեղծագործության գեղարվեստական շրջանի, դպրոցի (ազդե-ցությունների) ուսումնասիրման հմտությունների ձևավորում: • Ձևավորել պատմական տարբեր իրադարձություններ ներկայացնող ստեղծագործություններ դիտելու, բնորոշ տարրերն առանձնացնելու կարողություններ: • Պատկերն իբրև թեմատիկ-իմաստային միասնություն ընկալելու կարողությունների ձևավորում: • Ինքն իրեն լսելու և միտքը ճիշտ կառուցելու կարողությունների զարգացում: • Ձևավորել վերլուծելու, տրամաբանելու, հետազոտելու կարողություններ:	

Վերջնար-դյունքները		• Դիտել ստեղծագործությունները, ներկայացնել հիմնական գաղափարները: • Առանձնացնել տարբեր պատմական իրադարձություններ ներկայացնող ստեղծագործություններում երկիրը, սովորույթ-ները ներկայացնող տարրերը: • Կատարել ստեղծագործության վերլուծություն: • Ներկայացնել գեղարվեստական ուղղությունները և ոճերը:	
1		«Հայկական արվեստի վերելքը միջնադարում»	1
4		«Իմպրեսիոնիզմի դարաշրջան»	1
7		Պատմական ժանր՝ թեմատիկան, յուրահատկությունները, ներկայացուցիչները և նրանց ստեղծագործությունները: Վ. Սուրենյանց պատմական ժանրի հիմնադիրը հայկական գեղանկարչության մեջ	1
11		Կենցաղային ժանր՝ թեմատիկան, ներկայացուցիչները և նրանց ստեղծագործությունները: Գ. Խանջյանը՝ կենցաղային ժանրի և գրքի, և ձևավորման վարպետ:	1
17		Հայաստանի ազգային պատկերասրահ	1

Բնապատկեր

Թեմատիկ պլան

Ուսումնասիրել ներկերի գույնի, գունավոր բծերի երանգների օգտագործումն իրական պատկերների պարզագույն բազմազանության հուզական վիճակների /արևային, ամպամած/, տրամադրությունների /տխուր, մռայլ/ հաղորդման գործում:
Փորձարկել տարբեր գունային զուգորդումների ստեղծման հնարները գեղանկարչական կոմպոզիցիաներում:
Արտահայտել գույնի զգացմունքային ներգործությունը մարդու տրամադրության վրա:
Ուսումնասիրի բազմազան գունատոնային նրբերանգների բացահայտման գործում գիտակցաբար օգտագործելու հնարները:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

Որո՞նք են կերպարվեստի ժանրերը

Ի՞նչ է բնանկարը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

Հիմնական գույները

Ջրալույծ ներկերի հատկությունները, հնչեղ, մաքուր, բարդ, փափուկ և այլ գունաբծեր, գունային զուգորդումներ ստանալու հնարները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Յուցադրել ջրաներկով գեղանկարչության տարբեր տեխնիկաներ /թաց տեխնիկայով, վրձնահարվածներով, գույնի ներարկում գույնի մեջ և այլն/:

Նկարել բնապատկեր

Գույնով արտահայել պատկերների ծավալը /պլենեռային ախատանք/:

Լուսաստվերով փոխադրի բնության գեղեցկությունը, օդի թափանցիկությունը:

Նատյուրմորտ

Թեմատիկ պլան

Ցուցադրական նյութ՝ Մ.Սարյան, Մ. Ավետիսյան, Ռ. Աթոյան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար





1. *Ստեղծել ծաղիկներով և մրգերով նատյուրմորտ:*
2. *Ի՞նչ է նատյուրմորտը և ինչ է այն նշանակում:*
3. *Ինչպե՞ս պատկերել նատյուրմորտ, ստանալով ծավալ:*
4. *Լույս ու ստվերի միջոցով ինչպե՞ս ստանալ ծավալ:*
5. *Ինչպե՞ս օգտագործել գույնը:*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

Գծերի, ձևերի, իրերի, առարկաների պատկերների ստեղծման առանձնահատկությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Թղթի մեջ կառուցելով տեղադրել պատկերները:
Արտահայտել լույս ու ստվերը:
Ստանալ ծավալ:
Գունավորել պատկերը:
Բնօրինակից՝ դիտելով ստանալ նատյուրմոր:
Նատյուրմորտ պատկերելիս կիրառել կոլորիտը որպես տրամադրության արտահայտման հիմնական միջոց:

Իմպրեսիոնիզմ

Թեմատիկ պլան

Ցուցադրական նյութ՝ Իմպրեսիոնիստների աշխատանքները






Ուսումնասիրել Կլոդ Մոնեի, Օգյուստ Ռենուարի, Պոլ Սեզանի, Էդգար Դեգայի ստեղծագործությունը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. *Նկարագրել - Վերլուծել - Մեկնաբանել - Քննարկել*
2. *Ի՞նչ խորհրդանշական նշանակություն ունեցավ Կ. Մոնեի «Տպավորություն: Ծագող արևը» ստեղծագործությունը:*
3. *Ի՞նչ էին պատկերում իմպրեսիոնիստները:*
4. *Ինչպ՞ես էին կիրառում լույսը:*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

«Իմպրեսիոնիզմ»-ը որպես եզրույթ սկսեց օգտագործվել Կ. Մոնեի «Տպավորություն: Ծագող արևը» կտավի շնորհիվ:

Իմպրեսիոնիստները պատկերում էին լուսուստվերը, ջրի խաղը, երկնքը և ամպերը:

Լույսը դառնում էր պատկերվող աշխարհի շարժման հիմնական կրողը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Ճանաչել «Իմպեսիոնիստների» ստեղծագործությունները։

Թվարկել այդ շրջանի մի քանի ստեղծագործողի անուն։

Կենցաղային ժանր

[Թեմատիկ պլան]

Ցուցադրական նյութ՝



Ուսումնասիրել Վարդգես Սուրենյանցի, Գրիգոր Խանջյանի, Հակոբ Հակոբյանի, Գուստավ Կուրբեի, Յան Վերմեերի, Պիտեր Բրեյգելի ստեղծագործությունը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. *Նկարագրել - Վերլուծել - Մեկնաբանել - Քննարկել*
2. *Ի՞նչն է միավորում ստեղծագործությունները:*
3. *Ի՞նչ տեսարաններ են պատկերված կենցաղային ժանրում:*
4. *Արդյո՞ք, միաժամանակ են ստեղծվել այս կտավները:*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

Բոլոր ստեղծագործություններում պատկերված են տեսարաններ մարդկանց առօրյա կյանքից։

Մարդկանց առօրյան ներկայացնող ժանրը կոչվում է կենցաղային։

Կենցաղային ժանրի ստեղծագործություններն արտացոլում են տվյալ ժամանակում ապրող մարդկանց կյանքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Ճանաչել «Կենցաղային ժանրի» ստեղծագործությունները։

Թվարկել Կենցաղային ժանրում ստեղծագործած հայ նկարիչների։